«Աղոթիր, Հելաման»

Դեյլ Սիրլ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Հելամանի առաջին դպրոցական օրն էր: Նա հագել էր իր սիրած վերնաշապիկը և ուներ նոր մատիտ: Նրա նոր ուսուցիչը թույլ տվեց, որ նա նստի սեղանի շուրջը՝ իր ընկերներ Սիլվեստերի, Ջորջի և Միգուելի հետ: Լավ օր էր:

«Մի կողմ դրեք ձեր իրերը»,- ասաց տիկին Մարտինեզը: «Ճաշի ժամն է»:

Հելամանի ընտանիքը միշտ միասին աղոթում էր ուտելուց առաջ: Նա ձեռք բարձրացրեց: «Տիկին Մարտինեզ, ուտելուց առաջ մենք աղոթելո՞ւ ենք»:

Տիկին Մարտինեզը ժպտաց Հելամանին: «Եթե ցանկանում ես, դու կարող ես աղոթել ուտելուց առաջ»:

Հելամանը և նրա ընկերները բացեցին իրենց ուտելիքները:

«Ի՞նչ է աղոթքը»,- հարցրեց Սիլվեստերը:

«Դա նշանակում է խոսել Երկնային Հոր հետ»,- ասաց Հելամանը: «Այդպիսով մենք շնորհակալություն ենք հայտնում Նրան մեր ուտելիքի համար»:

«Կարո՞ղ ես դու աղոթել բոլորիս համար»,- հարցրեց Միգուելը:

Հելամանը ծալեց ձեռքերը: Նրա երեք ընկերները նույնպես ծալեցին իրենց ձեռքերը: Հելամանը փակեց աչքերը և խոնարհեց գլուխը: Նույնը արեցին և նրա ընկերները:

Ապա Հելամանը աղոթեց այնպես, ինչպես իր

©ԵՄՍՊԵ ՀՇՄ. ԻՐԱԼԱՅՆ ԱՐԽԻՎ

ընտանիքն էր աղոթում: Նա շնորհակալություն հայտնեց Երկնային Հորը իրենց ունեցած լավ օրվա և ճաշի համար: Նա խնդրեց օրհնել իրենց ուտելիքը: Նա ավարտեց աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով և ասաց «Ամեն»:

Սիլվեստերը, Ջորջը և Միգուելը վեր նայեցին:

«Դուք նույնպես կարող եք ասել *ամեն*»,- ասաց Հելամանը:

Նրա ընկերները ժպտացին և ասացին «Ամեն»:

Հաջորդ օրը ճաշի ժամին Սիլվեստերն ասաց . «Աղոթիր, Հելաման»:

«Այո, աղոթիր, Հելաման»,- ասաց Միգուելը: Ջորջը գլխով արեց:

Ուստի Հելամանը կրկին աղոթեց: Այս անգամ նա ասաց, որ շատ շնորհակալ էր, որ մայրիկը պատրաստել էր իր սիրած սենդվիչը՝ խոզապուխտով և պանրով: Նա խնդրեց Երկնային Հորը օգնել իրենց սովորել դասի ժամանակ այդ օրը:

Ամեն օր ճաշի ժամին Հելամանի ընկերներն ասում էին . «Աղոթիր, Հելաման»: Եվ ամեն օր Հելամանը աղոթում էր: Նա ամբողջ շաբաթ աղոթեց իր ընկերների հետ:

Հաջորդ երկուշաբթի՝ ճաշի ժամին, Միգուելն ասաց . «Այսօր ես կաղոթեմ»:

Հելամանը զարմացած էր: Նա ծալեց ձեռքերը, փակեց աչքերը, խոնարհեց գլուխը և լսեց, թե ինչպես էր Միգուելն աղոթում:

Միգուելը սկսեց աղոթել՝ ասելով . «Թանկագին Երկնային Հայր»: Նա շնորհակալություն հայտնեց իրենց ուտելիքի համար և խնդրեց Նրան օրհնել այն: Նա ավարտեց աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով և ասաց «Ամեն»:

«Ամեն»,- ասացին Հելամանը և Ջորջը:

«Ամեն»,- ասաց Սիլվեստերը: «Ես չգիտեի, որ դու կարող ես աղոթել»:

«Ես սովորել եմ՝ Հելամանին լսելով»,- ասաց Միգուելը: «Ես հարցրի ծնողներիս՝ արդյոք կարող եմ տանը աղոթել մեր ընթրիքից առաջ: Նրանք ասացին այո, ուստի ես աղոթում եմ՝ ինչպես Հելամանը»:

«Օ՜»,- ասաց Սիլվեստերը: «Կարծում եմ, ես նույնպես կհարցնեմ իմ ծնողներին՝ արդյոք կարող եմ տանը աղոթել մեր ընթրիքից առաջ»:

«Ես նույնպես»,- ասաց Ջորջը:

Հելամանը ժպտաց: Նա ուրախ էր, որ կարողացել էր օգնել իր ընկերներին սովորել խոսել Երկնային Հոր հետ: Նա գիտեր, որ Երկնային Հայրը սիրում է իրեն, և Երկնային Հայրը սիրում է նաև իր ընկերներին: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Մեքսիկայում: